զայրն զդատտ և գիտնաւոր եւ զնա ճանաչել ինքեանց հովիւ հոգեւոր, որ գիտէր անտեսել զամենայն պէտս նոցին. այլ ժողովուրդն յուզեալ 'ի Գաբրիելէ ոչ կամէին թողուլ զԳաբրիէլ և ընդունել զԴաւիթ, և ինքն Գաբրիէլ անհնարին ասէր դառնալ յԵրուսաղէմ, զի եթէ առաւել եւս բռնացին 'ի վերայ իմ, առաջի կայ ինձ լինիլ կրօնափոխ՝ և կամ լինիլ դահիճ անձին. զայս ամենայն անցս իշխանաւորք տեղւոյն և Դաւիթ վարդապետ գրեցին յԵրուսաղէմ և ինքն սարսափեցաւ դառնալ յԵրուսաղէմ, և զԳաբրիէլ թողուլ 'ի տեղի իւր։

Ի սորա աւուրս 'ի հրդեհին այրեցան ոմանք 'ի կալուածոց Աթոռոյն, և յանհոգութենէ նորին տեղիք նոցին կորեան՝ մնացեալ յաւերակի, այլք կարօտեալ նորոգութեանց՝ մնացին այնպէս, և ոմանք եւս փոփոխեալ այլայլեցան։ Ապա 'ի խնդրոյ ազգապետաց տեղւոյն առաքեցաւ յԵրուսաղէմ 190,000 դահեկանս տակս նորոգելոյ զհրդեհեալ տունս. 'ի հասանիլ այսր գումարի 'ի ձեռն Թէոդորոս վարդապետի և Սարկաւագ Յովսէփայ, զանց արարին զենդրովք նորոգութեան, և առաւել շահաբեր և օգտակար վարկանելով՝ գնեցին այնու յԱղէքսանդրիա տունս 4 և կից նմին պարտէզ ընդարձակ, որպէս յայտ առնէ զայս նամակ նորին Գաբրիէլ վարդապետի, և յետկար կալուածոյն (Հէօճճէթ) գրեցաւ յանուն աղքատաց վանաց Ս. Յակոբայ, կտակեալ Շէրբիի օրինօք անփոփոխելի և անվաճառելի։ Եւ զի մինչեւ ցայս վայր Ս. Սարգիս եկեղեցին Հայոց, որ 'ի խորշս Մալթի վանաց 'ի Գահիրէ, փոխանակեալ ընդ մատրան Մալթոց 'ի սնարս Գերեզմանին Քրիստոսի, 'ի Ս. Յարութիւն, որպէս ասի, և վերանորոգեալ յառաջնորդութեան Գրիգոր վարդապետի յամի Տեառն 1606, որպէս յայտ առնէ արձանագրութիւն տեղւոյն, այս եկեղեցի կարի փոքր հնացեալ և խրթին, եւ անյարմար ժամանակին, ուստի Գաբրիէլ վարդապետ եւս 'ի մտի հիմն արկանել նորոգ եկեղեցւոյ, եւ առ այս ձեռնարկութիւն պէտս ունէր բազմագումար դրամոց. ընդ նուէրս ժողովրդոց խառնեաց եւ զարդիւնս կալուածոց Աթոռոյն, և 65,000 դահեկանս ընդ այլ գոյից Սամուէլ վարդապետի վախճանելոյ 'ի Հնդիկս, Նուիրակի Ս. Աթո-